ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնող ֆիզիկական անձանց համար

2024

Ուղեցույցի նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումները

ՈՐՈՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՐԱՉԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵԿՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

1. *Առաջանում է արդյո՞ք մաքսային վճարներ վճարելու անհրաժեշտություն՝ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունից անձնական օգտագործման ապրանքներ արտահանելիս.*

Անկախ իրենց արժեքից, քաշից և (կամ) քանակից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից անձնական օգտագործման ապրանքներն արտահանվում են առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման:

Ուշադրություն.

Ապրանքները համարվում են անձնական օգտագործման, եթե դրանք նախատեսված են ֆիզիկական անձանց, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չկապված, անձնական, ընտանեկան, տնային և այլ կարիքների համար:

2. Ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող, ո՞ր անձնական օգտագործման ապրանքներն են ենթակա պարտադիր հայտարարագրման Հայաստանի Հանրապետությունից արտահանելիս.

Հայաստանի Հանրապետությունից արտահանելիս պարտադիր հայտարարագրման ենթակա ապրանքներ են հանդիսանում.

- ✓ Մշակութային արժեքները,
- ✓ Անհետացման եզրին գտնվող բույսերը և կենդանիները,
- ✓ Տրանսպորտային միջոցները (բացառությամբ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ միության) անդամ պետությունում գրանցված տրանսպորտային միջոցների),
- ✓ Զենքը և զենքի մասերը,
- ✓ Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերը,
- ✓ Կանխիկ դրամական միջոցները և (կամ) ճանապարհային չեկերը, եթե Հայաստանի Հանրապետության տարածքից միանվագ արտահանման ժամանակ այդ կանխիկ դրամական միջոցների և (կամ) ճանապարհային չեկերի ընդհանուր գումարը գերազանցում է ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը,
- ✓ Դրամական գործիքները (բացառությամբ ճանապարհային չեկերի)՝ անկախ չափից:

Ուշադրություն

Նշված ցանկում ընդգրկված մի շարք ապրանքներ կարող են Հայաստանի Հանրապետությունից արտահանվել միայն Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմնին ներկայացնելու դեպքում:

ՀՀ տարածքից ապրանքերի արտահանման արգելքներին և սահմանափակումներին վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «Անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներին չդասվող ապրանքների, արգելքների ու սահմանափակումների պահպանմամբ ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող անձնական օգտագործման ապրանքների մասին» ուղեցույցում՝ սույն ուղեցույցում նշված կայքէջի հասցեով, կամ QR կոդով անցում կատարելու միջոցով:.

Մասնավորապես անհրաժեշտ է իմանալ նաև, որ.

❖ Հայաստանի Հանրապետությունից, որպես անձնական օգտագործման ապրանքներ, չեն կարող արտահանվել՝

- ✓ Թառափազգի ձկնատեսակների ձկնկիթ՝ 250 գ-ից ավելի քանակությամբ.
- ✓ Ձուկ, խեցգետնակերպեր (կենդանի, պաղեցրած, սառեցրած)՝ 5 կգ-ից ավելի քանակությամբ.
- ✓ Բնական ալմաստներ (բացառությամբ՝ 75 հազար ԱՄՆ դոլարից ոչ ավելի արժողությամբ ադամանդների):

Անկախ քանակից՝

- ✓ Հանքային հումք.
- ✓ Օզոնային շերտը քայքայող նյութեր.
- ✓ Վտանգավոր թափոններ.
- ✓ Գաղտնի տեղեկատվության ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ.
- ✓ Ընդերքի մասին տեղեկատվություն.
- ✓ Տպագիր, տեսալսողական և այլ կրիչների վրա գտնվող՝ արգելված տեղեկատվություն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

❖ Արտահանման սահմանափակումներ են գործում այնպիսի ապրանքների նկատմամբ (այդ թվում՝ այդպիսի ապրանքները միության այլ անդամ պետության տարածք տեղափոխելու դեպքում), որոնք հանդիսանում են երկակի կամ ռազմական նշանակության ապրանքներ (այսինքն՝ հսկվող ապրանքներ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն այն ապրանքների նկատմամբ, որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ օրենքի իմաստով հսկվող ապրանքներ:

Ուշադրություն

- **Երկակի նշանակության ապրանքների ցանկը հաստատված է 2011 թվականի դեկտեմբերի 15-ի** «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 6-ի թիվ 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 1785-Ն որոշմամբ;**
- **Ռազմական նշանակության ապրանքերի ցանկը հաստատված է 2009 թվականի նոյեմբերի 12-ի** «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» **N 1308-Ն որոշմամբ;**
- **Զգայուն ապրանքերի ցանկը հաստատված է 2023 թվականի մայիսի 25-ի** «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» **N 808-Ն որոշմամբ:**

Հիշատակված որոշումներով հաստատված ցանկերին հնարավոր է ծանոթանալ https://www.arlis.am/ **կայք էջում:**

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

3. Ի՞նչ է հարկավոր իմանալ Հայաստանի Հանրապետությունից բժշկի կողմից նշանակված թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղեր արտահանելիս.

Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը կարող են արտահանվել ֆիզիկական անձի կողմից՝ մաքսային անցակետում իր մոտ առկա՝ բժշկի կողմից նշանակված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի քանակի և ձեռքբերման օրինականության վերաբերյալ ուղևորային հայտարարագիր լրացնելու և մաքսային մարմնին ներկայացնելու դեպքում: Ընդ որում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի արտահանումն իրականացվում է՝ բժշկական ցուցումների մասին վկայող համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա, որտեղ նշված է ապրանքի անվանումը և քանակը: Նշված բժշկական փաստաթղթերը կամ վերջիններիս վավերացված պատճենները կազմվում են հայերեն կամ մաքսային մարմնին կարող են ներկայացվել դրանց՝ օտար լեզվից թարգմանված և նոտարական վավերացում ստացած պատճենները:

4. Ինչ է հարկավոր անել այն դեպքում, երբ Ձեր անձնական օգտագործման ապրանքները Հայաստանի Հանրապետությունից արտահանում եք ժամանակավորապես (այսինքն մտադիր եք դրանք հետագայում կրկին ներմուծել Հայաստանի Հանրապետություն).

Եթե Դուք Հայաստանի Հանրապետությունից ապրանքները ժամանակավոր եք արտահանում, ապա կարող եք դիմել մաքսային մարմնին՝ ժամանակավոր արտահանվող անձնական օգտագործման ապրանքների նույնականացում իրականացնելու համար, քանի որ այդ նույնականացումը կարող է նպաստել առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք դրանց հետադարձ ներմուծմանը:

Այս դեպքում՝ Անձնական օգտագործման ապրանքների նույնականացման մասին նշվում է ուղևորային մաքսային հայտարարագրում, որի մեկ օրինակը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության տարածքից այդ ապրանքների ժամանակավոր արտահանումն իրականացնող ֆիզիկական անձին:

5. Ի՞նչ է հարկավոր իմանալ՝ Հայաստանի Հանրապետությունից միության անդամ պետություններ միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով ուղեկցվող ուղեբեռով անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխելիս, այդ ապրանքների միության ապրանքի կարգավիճակը պահպանելու համար.

Հայաստանի Հանրապետության տարածքից ցամաքային ճանապարհով (միության անդամ չհանդիսացող պետության տարածքով) այլ անդամ պետության տարածք արտահանվող անձնական օգտագործման ապրանքները կարող են ՀՀ տարածքից արտահանվել ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ՝ նույնականացում իրականացվելու միջոցով: Հակառակ դեպքում՝ միության անդամ այլ պետության տարածք ժամանելիս դրանք կդիտարկվեն, որպես օտարերկրյա ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքներ և դրանց նկատմամբ կկիրառվեն Միության անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների վերաբերյալ կարգավորումները:

6. Հայտարարագրումից բացի ուրիշ ի՞նչ պարտավորություն ունի ֆիզիկական անձը, այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունից մեկնելիս նրա մոտ առկա է՝ գործող փոխարժեքով 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը գերազանցող կանխիկ գումար և դրամական գործիքներ.

Գործող փոխարժեքով 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը գերազանցող կանխիկ գումար և դրամական գործիքներ ունեցող ֆիզիկական անձը ՀՀ մաքսային սահմանը հատելիս պետք է ոչ միայն հայտարարագրի գումարը, այլև փաստաթղթեր ներկայացնի, որոնք հաստատում են այդ միջոցների ծագումը: Մասնավորապես, խոսքը հաշվեհամարից դրամական միջոցներ հանելու վերաբերյալ բանկային փաստաթղթի, ինչպես նաև փոխանակման (կոնվերսիոն) գործողությունների, վարկերի ստացման փաստաթղթի մասին է, ինչպես նաև այն փաստաթղթերի, որոնք հաստատում են քաղաքացիական և իրավական գործարքների կատարումը՝ օրինակ, ժառանգություն ստանալն ու նվիրատվությունը:

- *Հայտարարագրման ենթակա ապրանքները՝ այդ թվում դրամական գործիքները, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը չհայտարարագրելը հանգեցնում է վարչական կամ քրեական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:*

- *Մաքսանենգությունը, որպես քրեորեն պատժելի արարք, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:*

Մաքսանենգություն է համարվում ստորև նշված ապրանքների միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխումը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու, կամ մաքսային կամ այլ փաստաթղթեր խաբեությամբ օգտագործելու միջոցով.

ա) 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափը գերազանցող գումարով կանխիկ դրամական միջոցներ կամ վճարային գործիքներ,

բ) ՀՀ կառավարության 14.01.2021թ. թիվ 35-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքներ կամ մշակութային արժեքներ՝ օրենքով սահմանված խոշոր չափերով,

գ) Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ, դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ դրանց պրեկուրսորներ կամ դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ կամ մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույսեր,

դ) Ռազմական նշանակության արտադրանք, տեխնիկա, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք, հրազեն կամ դրա բաղկացուցիչ մաս, ռազմամթերք,

ե) Ռադիոակտիվ նյութ կամ ռադիոակտիվ աղբյուր, միջուկային նյութ, խիստ ներգործող, թունավոր նյութ, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող նյութ կամ սարք, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենք կամ երկակի նշանակության ապրանք:

Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային հսկողության անցկացման համար նշանակություն ունեցող տեղեկությունները ստանալու նպատակներով իրավունք ունեն անցկացնելու ֆիզիկական անձանց, նրանց ներկայացուցիչների հարցումներ, կիրառել մաքսային օրենսդրությամբ նախատեսված մաքսային հսկողության այլ ձևեր:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ